ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **«08» «նոյեմբերի» 2018թ.**
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Դ.Շոլև «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի թափոնների հաշվառման,դասակարգման և տեխնոլոգիաների ուսումնասիրության բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Հայրապետյան «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական բաժնի պահեստապետ,ապրանքագետ

Ա.Մարգարյան «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի Միջազգային կապերի բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝
Շ.Ավագյան «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական բաժնի գնումների մասնագետ

1. «ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Դ. Շոլև)

1.1. «ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստը կայացել է 2018 թվականի նոյեմբերի 8-ին, ժամը 10:00-ին, ք.Երևան, Չարենցի 46,4-րդ հարկ,46 սենյակ հասցեում:

2. «ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը շտկելու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. Ա/Ձ Ռասուլ Ռահիմի Մաջդի Հասսան-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել Ա/Ձ Ռասուլ Ռահիմի Մաջդի Հասսանի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունը* ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (29.10.2018թ.) կազմել է 336711 ՀՀ դրամ: Հայտով ներկայացված 1-ին չափաբաժնով ժամկետանց հարկային պարտավորության «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված չափը գերազանցվել է 30471 ՀՀ դրամով:

* «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

3. Հանձնաժողովը որոշեց՝

(Դ. Շոլև)

3.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել Ա/Ձ Ռասուլ Ռահիմի Մաջդի Հասսան-ի հայտը:

3.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

3.3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 45-րդ կետը՝ սահմանված ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել Ա/Ձ Ռասուլ Ռահիմի Մաջդի Հասսանի տվյալները, քանի որ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Դ. Շոլև

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա.Հայրապետյան

_____ Ա.Մարգարյան

Քարտուղար՝ _____ Շ.Ավագյան